

 ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՍՏԱՐ

113

Բժիշկ Դ. Պ. ԲԵՂԵՂԱՆ

Թ

ԵՐԳ Ե ՌԱԽԻՏԸԸ

ՑԵՎ ԻՆՉՊԵՍ  
ՊԱՅԲԱՐԵԼ  
ՆՐԱ ԴԵՍ

616-053-2  
Բ-41

ՀՀԱԳ-ԱՎՎԱՎՎԱՆ ԱԵՐԿՐԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԹՎԱՆԻՆ 1936

01.03.2013

ԱՐԴՅՈՒՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

616-0539  
Բժիշկ Լ. Պ. ԲԵԴԵԼՅԱՆ  
Պայրության յեզ մանկության  
տահպանության Ազգ-Ծեվծով-  
յան յերկրային ինստիտուտ  
Բ-4 | ԱԿ

Է Վ Զ Ե Խ Ա Խ Ի Տ Ը  
ՅԵՎ ԻՆՉՊԵՍ  
ՊԱՅՔԱՐԵԼ ՆՐԱ ԴԵՄ


246 38

40/2

Պրոֆ. Ի. ՑՈ. ԱԵՐԵԲՐԻՑՈՎԻ  
Խմբագրադյանը

Թարգմ. Հ. ԲԱԴԴԱՆՅԱՆ

ԽՈՍՀ-ՄԵԴՈՒՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ  
ՈՂՈՏՈՒՆ-ԴՈՆ-1936



20 JUL 2010

ԲԱԿ. ԸՆԹԵՐՑՈՂ,

Հայտնիք ու կարծիքն այս գրքի մասին նետելով հասցեով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.  
№ 30, Азово-черноморское Краевое  
Книгоиздательство, армянская секция.  
Նամակները կարելի յեւ ուղարկել առանց  
նամակադրումի:

**ԻՆՉՊԵՍ Ե ԳՈԳ ՏԱՆՈՒՄ ԽՈՐԴՐԴՎՅԻՆ ԻՇ-  
ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՐՐԱՋՈՒ-  
ԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության առաջին իսկ որերից խորհրդային իշխանությունն սկսել ե հոգ տանել աշխատավոր ազգաբնակչության առողջության մասին:

Խորհուրդների յերկրի ընդհանուր աճման և ամրապնդման հետ միաժամանակ աճում ու ամրապնդվում ե ժողովրդական առողջապահությունը, աճում ե պրոլետարական պետության հոգատարությունն աշխատավոր ժարդու մասին, նրա կարիքների, նրա առողջության մասին: «Մենք, — ասում եք ՌՍՖՀ խորհուրդների 16-րդ Համամիութենական համագումարում Առժողկոմ ընկ, Կամինսկին, —

պայքարում ենք այն բանի համար, վոր բանվորներն ու կոլխոզնիկները չհիվանդանան, իսկ հիվանդանալիս՝ լավ և ժամանակին քժշկվեն, վոր մարդիկ ծնվեն ու մեծանան լավ պայմաններում, վոր նրանք առողջ ապրեն ու առողջ աշխատեն, վոր նրանք ֆիզիկապես զարգացած լինեն, վոր նրանք սիրուն և առողջ յերեխաներ ունենան, ավելի լավ՝ քան իրենք են»:

Իսկ այս խնդիրները լուծելու համար հարկավոր եր նոր ձեռվ վերակառուցել մեր կյանքը, վորպեսզի մի անգամ ընդմիշտ ձեռք քաշել դաժան անցյալի ժառանգությունից, նրա խավարամտությունից, կեղտից, տպատությունից, մնութիւնապաշտությունից և այլն: Ուրիշ խոսքով՝ վերակառուցել մեր կենցաղը, այսինքն՝ կուլտուրապես ապրել, կուլտուրապես աշխատել: Ու յեթե հարցնենք՝ կատարինմ ե արդյոք մեր կուսակցության լոգունգը, մենք կարող ենք ասել, վոր այս, հաջողությամբ կատարվում ե այն:

Բավական ե մատնանիշ անել այն հսկայական շինարարությունը, վոր առաջ ե տարգում ամբողջ խորհրդալին միության մեջ՝ թե նրա քաղաքներում և թե գյուղերում: Կառուցվում են վիթխարի ֆաբրիկներ ու

գործարաններ, վերակառուցվում են ամբողջ քաղաքներ, շինվում են հիանալի, լուսառատ, ընդարձակ տներ, բազմաթիվ նոր հիվանդանոցներ, պոլիկլինիկներ, ամբուլատորիաներ, սանատորիաներ, հանգստի տներ. շինվում են կուլտուր-կենցաղային հիմնարկներ՝ հանրային ճաշարաններ, բաղնիքներ, լվացքատներ և այլն:

Իսկ զրա հետ միասին մենք տեսնում ենք, թե ինչպես նոր ձեռվ և վերակառուցվում նաև բանվորի ու կոլխոզնիկի կենցաղը: Կուսակցական կազմակերպությունների զեկավարությամբ կոլխոզները հաջող պայքար են մղում ունենալու կյանքի, կուլտուրական կյանքի համար: Կոլխոզնիկը հող և տանում իր բնակարանի մաքրության մասին և աշխատում և ըստ հնարավորության լավ սարքավորել այն: Իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար նա ավելի շատ լրագրերի և գրքերի պահանջե ներկայացնում: Հիվանդանալիս՝ նա դիմում ե քժշկի և վոչ թե «հաքիմի»:

Հոգտանելով աշխատավորների առողջության մասին, խորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն ե նվիրում յերեխաների առողջապահությանը, վորովհետև յերե-

խաները մեր հերթափոխներն են, մեր ապագան են: Հիշենք մեր մեծ առաջնորդ ընկ: Ստալինի ասած այն խոսքերը, թե մեզ հարկավոր եւ «աճեցնել բանվորների նոր սերունդ, առողջ ու կենսուրախ բանվորների, վորոնք ընդունակ լինելին խորհրդային յերկը ի հզորությունը պատշաճ բարձրության հասցնել և պաշտպանել նրան թշնամու վոտնձորություններից»:

Եեվ մենք տեսնում ենք այն ահազին հասկացողությունը, վոր աարվում և մանուկների համար. թե՛ քաղաքում և թե՛ գյուղում բացվում են մայրության և մանկության պաշտպանության հազարավոր ու տասնյակ հազարավոր հիմնարկներ, ինչպես են՝ մանկական մուրները, մանկական առողջապահիկ հրապարակները, մանկական տունը, ծննդաբերության տները, մանկական կոնսուլտացիաները, հիվանդ յերեխաների համար սանատորիաները և այլն:

Այս հիմնարկներում ե կոփկում ֆիզիկապես քաջաւողջ, կոլեկտիվում մեծացած վստահելի հերթափոխությունը: Այս հիմնարկների ոգտագետության պերճախոս ապացույցն ե մանուկների մահացության նվազումը: Ցարական Ռուսաստանում, ծնված

հարյուր յերեխաների յերրորդ մասը, մեկտարեկան հասակի չհասած, մահանուռմ երայլեայլ հիվանդություններից: Ներկայումս, խորհրդային իշխանության որով, այս թիվն արդեն կիսով չափ պակասել ե, այլապես ասած՝ այդ հասակի մանուկների մահացությունը 2 անգամ պակասել ե:

Բայց մենք, իհարկե, դրանով չենք կարող սահմանափակվել, այլ պետք ե աշխատենք հասնել այն բանին, վոր մանուկների մահացության տոկոսն ել ավելի պակասեցնենք:

Մենք պետք ե հիշենք, վոր աճող մանկական որգանիզմը գեռ այնքան հարմարված չե զանազան հիվանդությունների գեմ պարարելու; ինչպես հասակավոր մարդու որգանիզմն ե: Այսինչ շատ հաճախ մանուկները մեծանում են վատառողջ ու թույլ, վորովհետեւ մենք հենց սկզբից, ծննդյան առաջին օրից, չենք իմացել կանոնավոր կերպով սննուցանել, կանոնավոր կերպով խնամել նրանց:

Ահա ինչու համար պետք ե հատուկ ու շադրություն նվիրենք մանկան կանոնավոր դաստիարակությանը, հատուկ խնամք տածենք դեպի նրան, վորպեսզի կարողանանք քաջառողջ, ամրակազմ սերունդ հասցնել:

Յերեխային վատառողջ ու թուլակազմ  
դարձող մի հիվանդության մասին ե, վոր  
ուղում ենք այսուեղ պատմել:

## ԻՆՉ ԲԱՆ Ե ՌԱԽԻՏԸ ՅԵՎ ԻՆՉՈՎ Ե ՆԱ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ

Թախիտն այլապես կոչվում ե «անգլիա-  
կան հիվանդություն»: Այս հիվանդությամբ  
բռնված յերեխաներին ձեղանից շատերն են  
տեսել շատերն ել իրենց յերեխաների վրա  
յեն դիտել նույն հիվանդությունը: Թախի-  
տով հիվանդ յերեխաները լինում են գունատ,  
ծուռ վոտիկներով, մեծ գլխով, մեծ փորով  
ու նեղ կրծքով:

Թեև այս հիվանդության ժամանակ ամե-  
նից ավելի տառապում են յերեխայի վոս-  
կորները, բայց և այնպես այս հիվանդու-  
թյունը մանկական ամբողջ որդանիզմի հի-  
վանդություն ե: Այս հիվանդությունը կարող ե  
սկսվել ամենավաղ մանկությունից՝ 3 ամսա-  
կանից սկսած, բայց ամենից հաճախ սկսվում  
ե 6 ամսական հասակից հետո: Այս հիվան-  
դությունը յերբեմն հազիվ ե նկատելի լի-  
նում և անհետ անցնում ե, բայց լինում են  
դեպքեր, յերբ նա մեծ տանջանք ե պատ-

ճառում յերեխային՝ իր հետքը թողնելով  
կյանքի ամբողջ ընթացքում: Ինչպես ասինք,  
ռախիտից գլխավորապես վոսկորները են  
տառապում. նրանք ավելի փափուկ են դառ-  
նում, քան առողջ յերեխաների վոսկորները,  
և անկանոն են աճում:

Յերեխան հաճախ ծնվում է կարծես թե  
բոլորովին առողջ, բայց հետապայում, կես  
տարեկան հասակի մոտ, սկսում են նկատել,  
վոր ամեն բան կարգին առաջ չի գնում: Ամենից առաջ այդ նկատվում է յերեխայի  
ծոծրակի վրա, վորը շոշափելիս՝ թվում և  
փափուկ ու կակուղ: Դրա հետ միաժամանակ  
յերեխայի գլուխն այնպիսի սաստկությամբ  
և քրտնում, վոր բարձը բոլորովին թրջվում  
է. այնուհետեւ թափվում են գլխի մազերը,  
իսկ ծոծրակը դառնում է ճաղատ:

Վոսկորների անկանոն աճման հետեւան-  
քով յերեխայի ճակտուը դրւու և ցցվում:  
այդ պատճառով ել նրա գլուխը քառանկյուն  
ձև և ընդունում: Առողջ յերեխայի գագաթը  
(հոգեատունը) աստիճանաբար փոքրանում ե  
և մոտավորապես 14 — 16 ամսական հասա-  
կում ծածկվում և մաղերով: Իսկ ռախիտով  
հիվանդ յերեխայի գագաթն սկզբում մեծա-  
նում և հետո շատ դանդաղությամբ մազով

Ե ծածկվում ու միայն յերկու կամ յերբեմն  
ել յերեք տարեկան հասակում խսպառ փակ-  
վում եւ Այդպիսի յերեխայի ատամներն ել  
ուշ են գուրս գալիս, այնպես զոր մեկ տա-  
րին լրացրած յերեխան սովորաբար վոչ մի-  
ատամ դեռ հանած չի լինում: Ժամանակ  
անցնելուց հետո գուրս են գալիս նրա ա-  
տամները, վորոնք հաճախ անկանոն կերպով  
են աճում:

Վոսկորների փափկանալուց ուսիխտավոր  
յերեխայի կրծքի վանդակը խիստ փոխվում  
է. նա հաճախ լինում ե նեղլիկ, կողքերից  
ճղմված և թռչունի կրծքի յե նմանում, դրա  
համար ել կոչվում ե «հավի կուրծք»: Այդ-  
պիսի նեղլիկ կուրծքը ճղմում ե թռչերը ու  
յերեխան դժվարությամբ ե ջնջում, ջնջար-  
գելություն ե ունենում: Մկանների թռւլու-  
թյան, հաճախակի փորլուծության հետևան-  
քով փորը փքվում ե ու գորտի փորի յե  
նմանում (հենց այդպես ել կոչվում ե «գոր-  
տի փոր»):

Ճիշտ այդպես ել փափկանում և վաս են  
աճում ձեռների ու վոտների վոսկորները.  
Նրանց ծայրերին ողակաձև հաստացումներ  
են առաջանում. մարմին ծանրությունից  
ծռվում են վոտները. նույնը տեղի յե ունե-

նում նաև վողնաշարի հետ: Առողջ յերեխա-  
լի վողնաշարը կազմված է փոքրիկ կլոր վոս-  
կրներից, վորոնք իրար միացած են կրծիկ-  
ներով ու մկաններով. այս վերջիններն ամ-  
րացված են վոսկրներին: Վողնաշարի այս-  
պիսի կառուցվածքի շնորհիվ ե, վոր առողջ  
յերեխան կարողանում ե ազատ կերպով ճկել  
և ուղղել իր մարմինը, իսկ ուսիխտավոր յե-  
րեխայի վողնաշարը, մկանների թռւլության  
ու մարմինի ծանրության պատճառով, կրվում  
է, իսկ վողնաշարի հարատե կրված դիրք  
ունենալուց կուզ ե առաջանում:

Յեթե հիվանդությունը բռնում է կոնքի  
վոսկորները, այս վերջինը ծռվում ե, դառ-  
նում ե նեղ և անկանոն ձև ուստանում: Այս  
հանգամանքն առանձնապես վնասակար ազ-  
դեցություն ե ունենում աղջիկների համար,  
վորովինեաև ապագայում նրանց ծծնդաբերու-  
թյունը կարող ե շատ դժվարություն առաջ  
բերել: Այդ վոսկորների ծռվելուց կոնքի անցըը  
դառնում ե նեղ, փորի հետեւանքով ծծնդա-  
բերությունը չափազանց դժվարանում է  
կամ յերբեմն ել անկորելի յե դառնում:

Բայց ուսիխտը միայն վոսկրների վրա  
չի ազդում. նրանից տառապում ե յերեխայի  
ամբողջ որգանիզմը: Ուսիխտավոր յերեխայի

Ե ծածկվում ու միայն յերկու կամ յերբեմն ել յերեք տարեկան հասակում իսպառ փակվում եւ: Այդպիսի յերեխայի ատամներն ել ուշ են գուրս գալիս, այնպես վոր մեկ տարին լրացրած յերեխան սովորաբար վոչ մի ատամ զեռ հանած չի լինում: Ժամանակ անցնելուց հետո գուրս են գալիս նրա ատամները, վորոնք հաճախ անկանոն կերպով են աճում:

Վոսկորների փափկանալուց ուսխիտավոր յերեխայի կրծքի վանդակը խիստ փոխվում է. Նա հաճախ լինում է նեղիկ, կողերից ձգմված և թոշունի կրծքի յե նմանում, դրա համար ել կոչվում ե «հավի կուրծք»: Այդպիսի նեղիկ կուրծքը ձգմում է թոքերը ու յերեխան դժվարությամբ ե շնչում, շնչարգելություն ե ունենում: Մկանների թուլության, հաճախակի փորլուծության հետևանքով փորը փքվում ե ու գորտի փորի յե նմանում (հենց այդպես ել կոչվում ե «գորտի փոր»):

Ճիշտ այդպես ել փափկանում և վատ են աճում ձեռների ու վոտների վոսկորները. Նրանց ծայրերին ողակաձև հաստացումներ են առաջանում. մարմնի ծանրությունից ծովում են վոտները. Նույնը տեղի յե ունե-

նում նաև վողնաշարի հետ: Առողջ յերեխայի փողնաշարը կազմված ե փոքրիկ կրոր վոսկորներից, վորոնք լրար միացած են կրծքիներով ու մկաններով. այս վերջիններն ամրացված են վոսկորներին: Վողնաշարի այսպիսի կառուցվածքի շնորհիվ ե, վոր առողջ յերեխան կարողանում ե ազատ կերպով ձկել և ուղղել իր մարմինը, իսկ ուսխիտավոր յերեխայի վողնաշարը, մկանների թուլության ու մարմնի ծանրության պատճառով, կը կում ե, իսկ վողնաշարի հարատե կը ված դիրք ունենալուց կուզ ե առաջանում:

Յեթե հիվանդությունը բռնում է կոնքի վոսկորները, այս վերջինը ծովում ե, դառնում ե նեղ և անկանոն ձև ե ստանում: Այս հանգամանքն առանձնապես մնասակար ազգեցություն ե ունենում աղջիկների համար, վորովինեաւ ապագայում նրանց ծծնդաբերությունը կարող ե շատ դժվարություն առաջ բերել: Այդ վոսկորների ծովելուց կոնքի անցքը դառնում է նեղ, փորի հետեւվանքով ծծնդաբերությունը չափազանց դժվարանում է կամ յերբեմն ել անկարելի յե դառնում:

Բայց ուսխիտը միայն վոսկորների վրա չի ազդում. նրանից տառապում ե յերեխայի ամբողջ որգանիզմը: Ռախիտավոր յերեխայի

մաշկն ու լորձաթաղանթները դառնում են դժգույն, սակավաբյուն, Սա հետեւանք և այն բանի, վոր արյան կարմիր գնդիկներն զգալի չափով պակասում են: Առողջ, նորմալ յերեխայի 1 խորանարդ սահմանաթար արյան մեջ պարունակվելու յեն 5 — 6 միլիոն կարմիր գնդիկներ, այնինչ ուսխիտավորների մոտ այդ թիվը յերբեմն կիսով չափ նվազում ե և հասնում ե 4, իսկ յերբեմն ել 3 միլիոնի:

Յերեխան դառնում ե ալարկոտ, անտարբեր, շրջապատող յերեխաների խաղերը նրան չեն զբաղեցնում: Միաժամանակ նրա քունը դառնում է անհանգիստ, յերեխան շուտ-շուտ զարթնում ե, նա դառնում ե շատ դյուրագրգիռ, քմահաճ, հաճախ առանց վորմե պատճառի: Մկանների թուլությունից և վոսկրների փափկանալուց նա ավելի ուշ ե սկսում գլուխը պահել ու նստել կանգնել և քայլել սկսում ե յերբեմն միայն 2 կամ 3 տարեկան հասակում: Յեթե ուսխիտն սկսվում ե այն ժամանակ, յերբ յերեխան արդեն նստում ե ու քայլում, ապա կարող ե պատահել վոր նա գաղաքի նստելուց ու քայլելուց: Ուսխիտավոր յերեխան խոսել սկսում ե նույնպես ավելի ուշ, քան նրա առողջ

հասակակիցները: Ծանր տեսակի սախիտ ունեցող յերեխանները շատ անգամ արդեն դպրոցական հասակից իրենց մտավոր զարգացմամբ հետ են մնում իրենց դպրոցական ընկերներից:

Ահա այն փոփոխությունները, վորոնք առաջանում են ուսխիտով հիվանդացած յերեխայի որդանիզմում:

Վտանգավոր ե արդյոք ուսխիտը յերեխայի կյանքի համար հետադայում: Յերբեմն լսվում են կարծիքներ, վոր ուսխիտը վտանգավոր հիվանդություն չե, և կան շատ ծնողներ, վորոնք քիչ ուշադրություն են դարձնում իրենց ուսխիտով հիվանդ յերեխաների վրա: Սակայն այսպիսի կարծիքը բոլորովին ուղիղ չե: Ճիշտ ե, հիվանդության թեթև դեպքերում, ժամանակի ընթացքում վոսկրներն սկսում են աստիճանաբար ամրանալ և շտկվել: Բայց բարձիթող արված ու չքիշկված ուսխիտը կարող ե կամ բոլորովին կործաննել յերեխային դեռ մասուկ հասակում կամ ցմահ կիսախինվալիդ դարձնել նրան:

Ուսխիտով հիվանդ յերեխաններն, որինակ, շատ անգամ հիվանդանում են ստամոքսի և աղիքների խանգարումով՝ փորկապությամբ, փորլուծությամբ, մշտական գագերով (քամի

բաց թողնելով): Իսկ մենք գիտենք, վոր ստամքսի և աղիքների ամեն տեսակ հիվանդություն մանկան կյանքի առաջին տարում շատ գտանդավոր ե: Մանավանդ այսպիսի հիվանդությունը գտանդավոր ե այն յերեխայի համար, որի վորը թույլ ե ու կախ ընկած, և ընդհանուր որգանիզմն ել տկար ե: Այս ե ահա պատճառը, վոր վորուուծությունից ուժիտավոր յերեխաները մահանում են:

Վերցնենք ուրիշ որինակի վաղագույն հասակի մանկան ֆիզիոլոգիական (բնախոսական) առանձնահատկություններն այսպես են, վոր նրա կրծքի վանդակը միշտ գտնվում ե ներշնչման վիճակում և չի կարող, մեծերի պես, դեպի ամեն կողմ լայնանալ: Ե՛լ ավելի դժվարանում ե ուժիտավոր հիվանդ յերեխայի շնչառությունը, վորովհետեւ, վոսկորների մեջ տեղի ունեցած փոփոխությունների հետեւ փանքով, նրանց կրծքի վանդակն այլանդակված ե լինում:

Բացի դրանից մենք գիտենք, վոր ուժիտավոր հիվանդ յերեխաների որգանիզմը թուացած ե, հետեւվարար վարակիչ հիվանդությունների հանդեպ նրա ունեցած դիմադրականությունն ել զգալապես պակաս ե լինում:

Դրա հետեւվանքով նրանք հաճախակի յեն հիվանդանում ծանր տեսակ թոքերի բորբոքումով, վոր յերեխն մահով ե վներջանում:

Կրծքի նեղ վանդակը, վոր մնում ե ամբողջ կյանքում, հասակավոր մարդուն ել հաճախ մեծ վանդներ ե սպառնում: Ամբողջ կյանքում կարող են մնալ նաև վոտների վուկորների ծովածքները, տափակ ներբանը և այլն: Իսկ թե ինչ նշանակություն ունի կնոջ համար կանոնավոր կոնքը, և թե վոլքան տառապանք ե կրում ծոված կոնք ունեցող կինը, այդ մասին արդեն խոսել ենք:

Ուրեմն, վնչ մի զեպքում չպետք ե ասել, վոր ուժիտավոր թեթև, անիմաս հիվանդություն ե:

Վոսկորների՝ ծանր ուժիտի ժամանակ առաջացած անուղղելի ծովածքները մնում են ամբողջ կյանքում:

## Ի՞ՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՈԱԽԻՏՈՎ ՀԻՎԱՆԴ ՅԵՐԵԽԱՅ ՈՐԳԱՆԻԶՄՈՒՄ

Ուժիտից ամենից ավելի վսասվում են յերեխայի վոսկորները: Ի՞նչ են լինում նրանք: Ինչու նրանք ճկվում, կակղանում, ծովում են և հիվանդագին դառնում:

Այս հարցին պատասխանելու համար,  
 մենք պետք ե իմանանք՝ ինչից ե կախված  
 առողջ յերեխայի վոսկը պնդությունը, կարծ-  
 րությունը։ Վոսկը պնդությունն ու կարծ-  
 րությունը նրանից ե, վոր նրա բաղկացու-  
 ցիչ մասն են կազմում զանազան աղեր և  
 գլխավորապես, կիրք։ Վարդան շատ կիր պա-  
 րունակի վոսկըն, այնքան ափելի կարծր ու  
 պինդ կլինի։ Յեթե մի այդպիսի կարծր վոսկը  
 դնենք ուտիչ թթվի մեջ, ապա այդ վոսկըն  
 մեջ գտնված կիրը կլուծվի, ու այն ժամա-  
 նակ վոսկըն կդառնա կակուղ և ճկուն. այդ  
 գեղքում նրան կարելի յե ճկել կամ ծոել  
 ուզածիդ պես և կարել գանակով։ Յեթե վերց-  
 նենք մի նորմալ վոսկը, կշռենք ու մի առ-  
 ժամանակ դնենք թթվի մեջ և հետո նորից  
 կշռենք, ապա կտեսնենք, վոր նա իր սկզբ-  
 նական քաշի մոտ յերեք քառորդը կորցրել  
 ե, Ահա վոսկը կորցրած այս յերեք քառորդ  
 քաշը հենց այն կը և աղերի քաշն ե, վոր  
 լուծվել են թթվի մեջ։ Դուրս ե դալիս, վոր  
 ռախիտի ժամանակ յերեխայի վոսկորները  
 շատ քիչ կիր են պարունակում իրենց մեջ։


Դուք կհարցնեք՝ վճրտեղից ե կիրը վոս-  
 կորների մեջ։

Գիտնականներն ապացուցել են, վոր մեր

բոլոր որդանները (վոսկորները, մաշկը, միսը,  
 ճարպը և այլն) կազմված են նույն նյութե-  
 րից, վոր գտնվում են մեր ամեն որվա կե-  
 րակը մեջ, միայն թե ուրիշ ձեվով։ Կերա-  
 կուրը, մտնելով ստամոքսն ու աղիքները,  
 մարսվում ե այնաեղ, իսկ այնտեղից ելներ-  
 ծծվում ե արյան մեջ։ Արյան մեջ մտնում  
 ե նա այն ձեվով, վոր հարկավոր և մեր  
 մարմնին, և այնուեետե արդեն արյան հետ  
 տարվում ե մեր որդանիզմի ամեն կողմերը։  
 Կիրն ելնմանապես՝ ընկնելով արյան հոսանքի  
 մեջ, տարվում ե վոսկորներին ու ներծծվում  
 ե նրանց մեջ։

245 Հ 0 / 2  
38

Ռախիտ ունիցող յերեխան, սովորաբար,  
 կերակը հետ միասին ստամում ե բավարար  
 քանակությամբ կրային աղեր։ Բայց բանն  
 այն ե, վոր նրա որդանիզմն այդ կիրն այն-  
 պես չի յուրացնում, ինչպես յուրացնում ե  
 առողջ յերեխան։ Առողջ յերեխայի ստացած  
 կրի մեծ մասը մտնում ե արյան մեջ և գոր-  
 ծադրվում ե նրա (յերեխային) վոսկորների  
 կազմության համար։ Իսկ կրի փոքր մասն,  
 առանց յուրացման, որդանիզմից դուրս ե  
 գնում յերեխայի արտաթորության և մեզի  
 հետ։ Բայց ռախիտավոր յերեխայի մոտ ընդ-  
 հակառակ է առաջնային դեպքությունը, ինչ մեծ մասը չի



յուրացվում և գուրս ե գնում որդանիզմից  
առանց ոգտագործվելու, իսկ փոքր մասը  
միայն անցնում ե արյանը և գործադրվում  
ե վոսկորների ամբացմանը:

Այսպես ե լինում նրա համար, վոր առողջ  
յերեխան սննդի հետ ստանում ե այնպիսի  
նյութեր (վիտամիններ), վորոնց շնորհիվ  
կրային աղերը հեշտությամբ են յուրացվում,  
իսկ ռախիտավոր յերեխան պրկված ե հար-  
կավոր քանակությամբ վիտամինից, Դրա հա-  
մար ել սննդի հետ ինչքան ել իր համար  
հարկավոր աղեր ստանա, նրանք, կարծես  
ծակ տոպրակ ընկած, յերեխայի որդանիզ-  
մում չեն մնում ու չեն ոգտագործվում:

## ՈՒՐ ՅԵՎ ՎՈՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՆ ՀԱՃԱՍ ՌԱԽԻՏՈՎ ԲՐՆՎՈՒՄ

Մենք արդեն ասինք, վոր ռախիտ կոչ-  
ված մանկական հիվանդությունը շատ հա-  
ճախ ե պատահում և ամենից շատ հարվա-  
ծում ե 6 ամսականից մինչև 2 տարեկան  
հասակի մանուկներին: Թեև ռախիտը տա-  
րածված է ամբողջ աշխարհում, բայց և այն-  
պես կան յերկիրներ, ուր մանուկների ռա-  
խիտով հիվանդանալու դեպքերը հազվագյուտ

են (որինակ՝ Արաբիան, Աֆրիկան և մյուս  
հարավային արեվադարձային յերկիրները):  
Սահմանված ե, վոր այս յերկրներում մշտա-  
պես ապրող ժողովուրդների յերեխաները  
ռախիտով համարյա չեն հիվանդանում: Բայց  
նկատված ե և ուրիշ բան. յերբ այս ժողո-  
վուրդները գաղթում են դեպի նյուսիս, յեվ-  
րոպական յերկիրներ, նրանց յերեխաները  
ռախիտով հիվանդանում են նույն իսկ ավելի  
հաճախ և ավելի ծանր կերպով քան թե տե-  
ղական յեվրոպացի ազգաբնակության յերե-  
խաները: Մյուս կողմից դիտված ե, վոր  
Աֆրիկա տեղափոխվող յեվրոպացիների մի  
քանի ռախիտավոր յերեխաները նոր բնա-  
կավայրում սկսում են շուտ առողջանալ:

Նշանակում ե, ռախիտի պատճառը վոչ  
այնքան յերեխան ինքն ե, վորքան այն յերկ-  
րի կլիման, ուր նա ապրում ե, և այն պայ-  
մանները, վորոնց մեջ նա գտնվում եւ Ցեղ  
իսկապես, ռախիտն ամենից ավելի տարած-  
ված ե այն յերկրներում, ուր արև որերն  
ավելի քիչ են, ուր անձրևները շատ են տե-  
ղում, ուր ավելի խոնավություն կա: Դրա  
հակառակ, ռախիտը հազվագյուտ ե այն վայ-  
րերում, ուր որերն արեվոտ են, ու կլիման  
չոր ե և մեղմ: Մի բժիշկ հետազոտեց Շվեյ-

շարիայի մանուկներին (Շվեյցարիան մի լեռնոտ յերկիր և Արևմտյան Յեվրոպայում): Պարզվեց, վոր Շվեյցարիայի լեռնալին մասում ապրող յերեխաները ռախիտով համարյա չեն հիվանդանում, իսկ այն յերեխաները, վորոնք նույն պայմաններում ապրում են լեռների ստորոտներին, հարթություններում, հաճախ են հիվանդանում:

Այս բացատրվում են նրանով, վոր բարձրում, սարերի վրա ոդն ավելի չոր եռ մարուր, և արև որեր շատ են լինում այնուեղի Նույնիսկ ձմեռը, ցրտաշունչ յեղանակներին, այստեղ կարելի յե ավելի յերկար մնալ ոդի մեջ՝ առանց ցրտից նեղվելու։ Իսկ հարթավայրում, ընդհակառակը, արև որերն ավելի քիչ են, ոդը խոնավ եր, թաց և վատառողջ։

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, ռախիտը նույնպես ավելի հաճախ պատահում ե հյուսիսում և միջին գոտում, մինչդեռ հարավում, ուր արևոտ որերն ավելի շատ են, ռախիտով հիվանդության դեպքերը հազվադյուտ են։

Ռախիտը կանխելու գործում լույսի ունեցած նշանակությունը ցույց տալու համար, գիտնականները հետևյալ փորձն արին Նրանք վեցըրին միաժամանակ ծնած յերեք

հատ շան լակոտ. մեկին թողեցին ազատ, լույսի մեջ մեծանալու, իսկ մյուս յերկսին տեղափորեցին մի մութ վանդակում. յերեքին ել կերակրում եյին միատեսակ, Քիչ ժամանակ անցած՝ մութ վանդակում մնացող յերկու լակոտները հիվանդացան. Նրանք դանդաղ եյին մեծանում ու նիհարում եյին, իսկ ազատ բաց թողնվածը մեծանում եր սիանգամայն առողջ։ Այն ժամանակ հիվանդներից մեկին վանդակից ազատ արձակեցին, և նա շուտով լավացավ, իսկ այն, վոր մնացել եր մութ վանդակում, դնալով ավելի յերթուլանում, նիհարում ու, յերբ սատկեց, պարզվեց, վոր նրա վոսկորները կակղել, ճկունեյին դարձել Միության ազդեցությամբ նրանում ռախիտ եր առաջացել ։ Նշանակում ե, լույսն անհրաժեշտ է կենդանիներին՝ նրանց կանոնավոր, առողջ զարգացման համար։

Նույնը կարելի յե ասել նաև մանուկների մասին։ Նկատված ե, վոր մանուկները ռախիտով հիվանդանում են հատկապես ձմեռվագերջին, վորովհետև ցուրտ և մութ ամիսների ընթացքում յերեխաներն ավելի յերեկար նստում են տանը, քիչ են դուրս դալիս զբոսնելու և սակավ են տեսնում արելը ինկ ամառը նրանք ամբողջորը դուրսն են,

արեի տակ, շատ անդամ միայն տրուսիկ հագած, ու նրանց մարմինը յենթակա յելինում արեի ճաւագայթների ներգործությանը:

Բացի արեգոտ որերով հարուստ հարավային տաք յերկրներից, ուսխիտը սակավ ե պատահում նմանապես հեռավոր հյուսիսում, բեկեռային յերկրներում: Թվում ե, թե այս խոտաշոնչ յերկրում, ուր արեն որվա մեջ յերկում ե ընդամենը 2—3 ժամ, իսկ շարունակ 3—4 ամիս անընդհատ տևում ե բեկեռային զիշերը, ուսխիտը շատ տարածված պետք ե լիներ. այնինչ իրականում ուսխիտով շատ քիչ յերեխաներ են հիվանդանում այնտեղ:

Այս յերեգույթը բացատրվում ե նրանով, վոր բեկեռային յերկրների ընակիչներն իրենց յերեխաներին՝ նրանց աշխարհ դալու առաջին իսկ ամիսներից՝ ձողածկան յուղ են խմացնում. իսկ այս ձուկն առատությամբ գտնվում ե հյուսիսային ծովերում: Զկան յուղը շատ հարուստ ե այն նյութերուի, վոր գիտնականները վիտամին են կոչում: Ինչպես հաստատել են բազմաթիվ փորձերը, այս վիտամիններն են հանդիսանում այն լավագույն միջոցը, վոր նախապահպանում են յերեխայի որգանիզմը ուսխիտով հիվանդանալուց:

Յերեխաների որգանիզմի մեջ այս վիտամինների պակասությունն ե, վոր ուսխիտ հիվանդությունն ե առաջացնում:

Յեթե այս այսպես ե, ապա ինչո՞վ բացարել այն հանգամանքը, վոր այնտեղ, ուր արեւոտ որերը շատ են ու ոդն ել մաքուր ե, յերեխաները չեն հիվանդանում նույնիսկ այն դեպքում, յերբ նրանք սննդի հետ հակառախիտային վիտամիններ չեն ստանում:

Ներկայումս կարծիք կա, վոր յերեխայի որգանիզմում, արեի ազդեցությամբ գոյանում են վիտամիններ, վորոնք և կանխում են ուսխիտի յերեան գալը:

Ուսխիտով հիվանդանալու և այս հիվանդության ծավալման գործում մեծ դեր են խաղում աշխատավորների նյութական դրությունը, նրանց ընակարանային պայմանները, ինչպես նաև ընակչության կուլտուրական մակարդակը: Իսկ մենք գիտենք, վոր այս հարցերը կապված են քաղաքական և տնտեսական վորոշ իրավակարգի հետ: Մեր յերկրում, ուր իշխանությունն ամբողջապես գտնվում ե աշխատավորների ձեռքում, կան բոլոր նախադրյալները վոչնչացնելու համար այն պայմանները, վորոնք ազդում են ուսխիտի տարածման վրա: Աշխատավորների

նյութական բարեկեցության արագ աճումը, բնակարանային պայմանների բարվոքումը և բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացումը, այս բոլորը միասին առած — գործակցում են յերկրի ընդհանուր սանիտարական առողջացմանը և միաժամանակ ստեղծում են այնպիսի պայմաններ, վորոնք արգելք են հանդիսանում ուսխիտով հիվանդություններին և նրա տարածմանը:

Մաքուր և լույս բնակարանը, սանիտարական-հիգիենային կենցաղային պայմանները, յերեխայի կանոնավոր խնամքը — այս բոլորը շատ կարեվոր են, իբրև ուսխիտով հիվանդանալու առաջն առնող միջոցներ։

Յերեխային կանոնավոր խնամք չտանելով՝ նրան զրկում են արեի լույսից ու մաքուր ողից։ Ցրտերը վոր մոտենում են, յերեխային սովորաբար դուրս չեն հանում, իսկ ծծկերներին բարուրում և որորոցն են պառկեցնում։ Այսպես նաև յերեխայի կերակրումը։ Ապացուցված ե, վոր ծիծ ուտող և նորմալ սնվող յերեխաներն ավելի քիչ են հիվանդանում ուսխիտով, քան թե այն մասնուկները, վորոնք մայրական կաթից զրկված լինելով՝ սնվում են առանց վորեւել կանոնի։ Յերեխային շատ վաղ սկսում են այս-

պիսի լրացուցիչ սնունդ տալ, վորը նա չի կարող կարգին մարսել, իսկ ծիծ են տալիս՝ յերբ վոր պատահի, կամ ընդհակառակը, շատ յերկար, մինչև 1 տարեկան և ավելի մեծ հասակը յերեխային միայն ծիծ են տալիս, առանց լրացուցիչ սննդի։

Այս բոլորը նպաստում ե ուսխիտի առաջնալուն։ Բավական հաճախ են այն դեպքերը, յերբ ուսխիտով հիվանդանում են վաղածին յերեխաներն, այսինքն նրանք, վորոնք ժամկետից առաջ են ծնվել։ Այս դեպքերը վերաբերում են սիֆիլիսով հիվանդ ծնողների յերեխաներին։ Այս տեսակ թուլակազմ, վատառողջ մանուկներն ավելի հեշտությամբ են զոհ գնում ուսխիտին։

Ինչու առանձնապես հաճախակի յեն այն դեպքերը, իերբ ուսխիտով հիվանդանում են 6 ամսականից սկսած մինչև 2 տարեկան հասակի յերեխաները։ Վորովնետև այդ հասակումն ե տեղի՝ ունենում յերեխայի բուռն աճումը։ այս հասակում յերեխայի ուժի մեծագույն մասը գործադրվում ե նրա առանձին որգանների ձեփավորման, ամրապնդման համար։ Մենք զիտենք, վոր յերեխայի քաջն առաջին յերկու տարում արագ կերպով ավելանում է, յերեխան մեծանում է, նրա վոս-

կորներն և մկաններն ամրանում են: Ավելի  
ուշ, մոտ 7 տարեկան հասակում, և հետո,  
14—15 տարեկանի մոտ, սեռական հասու-  
նության շրջանում, յերբ նորից ե ուժեղա-  
նում աճումը, նույնպես դիտվել են, թեև,  
այն, վոչ հաճախակի, — այսպես կոչված ու-  
շացած ռախիտի դեպքեր, բայց սրանք այն-  
քան ծանր տեսակի չեն, ինչպես են վաղ  
մանկության ռախիտները:

Այսպես ուրեմն, համառոտակի կրկնենք  
այն պայմանները, վորոնք նպաստում են  
յերեխայի նախապահպանմանը ռախիտով հի-  
վանդանալուց:

1. Ռախիտը հազվագեպ ե հարավային  
յերկրներում, ուր շատ արև կա և ուր կի-  
ման չոր ե:

2. Ռախիտը հազվագեպ ե հեռավոր հյու-  
սում, բեկեռափին յերկրներում, վորովհետև  
այսաեղ յերեխաներն՝ իրենց կյանքի առաջին  
իսկ ամիսներից սկսած՝ ձկան յուղի հետ վի-  
տամիններ են ընդունում, վորոնք նախապահ-  
պանում են յերեխայի որգանիզմը ռախիտից:

3. Հազվագյուտ են ռախիտով հիվանդա-  
նալու դեպքերը բարձր լեռնային վայրերում,  
ուր կիման յեռնոյին ու չոր ե և արե-  
փոտ որեղը շատ են:

4. Բացի այս բոլորից, նշանակություն  
ունեն սանիտարա-հիվիենային և կենցաղա-  
յին պայմանները՝ բնակարանի, զգեստի մաք-  
րությունը, յերեխայի ձեռնհաս ու կարգին  
խնամքը և յերեխայի կանոնավոր կերակ-  
րումը:

Այս բոլոր պայմաններն իմանալուց հետո  
մեզ ավելի հեշտ կլինի պայքար մղել ռա-  
խիտի դեմ, ոգտագործելով մեր ձեռքում  
գտնված բոլոր հնարավորությունները նրան  
կանխելու համար:

## ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՅԵՐԵԽԱՎՅԻՆ ՌԱԽԻՏԻՑ

Պատմենք համառոտակի այն մասին, թե  
ինչ պետք ե անել, վոր յերեխան ռախիտից  
պահպանված լինի և մեծանա իրեն ամրա-  
կագմ և քաջառողջ մարդ:

Ծծկեր յերեխայի կանոնավոր զարգաց-  
ման համար նախ և առաջ ահագին նշանա-  
կություն ունի կանոնավոր կերպով ու շնորհ-  
քով նրան կերակրելը: Գիտնականներն ապա-  
ցուցել են, վոր ծծկեր յերեխայի համար լա-  
վագույն սնունդը մայրական կաթն եւ Որ-  
գանիզմի կանոնավոր զարգացման համար

անհրաժեշտ բոլոր հյութերը յերեխան ստա-  
նում ե մայրական կաթիմիջոցով։ Բայցի դրա-  
նից, մայրական կաթի հետ յերեխան ստա-  
նում ե նաև այնպիսի նյութեր, վորոնք նրա  
որդանիզմը դարձնում են ուժեղ, գիմաց-  
կուն և պահպանում են նրան զանազան հի-  
վանդություններից, վորոնց թվում նաև վա-  
րակիչ ախտերից։ Ավացուցված ե, վոր հար-  
յուր ծծկեր յերեխաններից 6 հոգին մահա-  
նում են 1 տարեկանի չհասած, իսկ հարյուր  
արհեստական յեղանակով սնվածներից մեռ-  
նում են 42 հոգի, վոր յոթն անգամ ավելի  
յե։ Անա ինչ մեծ նշանակություն ունի  
մանկան համար մայրական կաթը։

Վորպեսզի մայրական կաթը լիովին պի-  
տանի լինի յերեխայի համար, մայրը չպետք  
ե գործածի վոգելից խմիչքները (ողի, գինի),  
վորովհետև դա կարող ե անուղղելի վնաս  
հասցնել յերեխային։ Բայց բավական չե այն,  
վոր մայրն ինքն ե ծիծ տախիս յերեխային,  
շատ կարեվոր ե, վոր նա իմանա կերակրելու  
կանոնավոր յեղանակը, ժամանակին սկսի  
հավելյալ սնունդ տալ և իմանա, թե յերը  
և ինչ հավելյալ սնունդ կարելի յե տալ նրան։

Առաջին ամիսները յերեխային հարկավոր  
ե ծիծ տալ որական 6 — 7 անգամ, որինակ

2<sup>1/2</sup> — 3 ժամը մի անգամ, վորովհետև այս  
ժամանակամիջոցում յերեխան կարողանում  
է մարսել իր ծծած կաթը։ Գիշերը հարկա-  
վոր չե յերեխային ծիծ տալ, թող նրա ստա-  
մոքար հանգստանա, այս բանին պետք ե վար-  
ժեցնել յերեխային նրա գոյության առաջին  
իսկ շաբաթներից։

Յերեխային հավելյալ սնունդ հարկավոր ե-  
5 — 6 ամսականից սկսած, վորովհետև այս  
հասակից նա արդեն կարիք ունի հավելյալ  
սնունդ։ Բայց չպետք ե տալ նրան ինչ վոր  
պատահի, վորովհետև յերեխայի ստամոքան  
ու աղիքները չեն կարող յուրացնել ամեն  
տեսակ սնունդ։

Նմանապես չի կարելի մեկ տարեկան-  
յերեխային սնուցանել միայն ծծով և հա-  
վելյալ կաթ տալով, ինչպես այդ անում են  
մի քանի մայրեր։ Իսկ ինչու չի կարելի։ Վո-  
րովհետև այդ ժամանակ ուժեղանում ե յե-  
րեխայի վոսկորների աճը, իսկ վոսկորների  
աճման համար, ինչպես ասել ենք, հարկա-  
վոր են ավելի շատ աղեր, մինչդեռ կաթի  
մեջ յեղած աղերն անբավարար են։ Հետեւա-  
բար կաթի հետ միասին հարկավոր ե տալ  
նաև աղեր պարունակող ուրիշ սնունդ ե,  
բացի դրանից, այն հատուկ վիտամինը, վոր

նպաստում ե աղերը յուրացնելուն։ Այս վի-  
տամբնի մասին վերն արդեն խոսեցինք։

Այս սնունդը հարկավոր ե տալ այնպես,  
վոր յերեխան կարողանա հեշտությամբ յու-  
րացնել։ Այս սնունդների կարգից են՝ սպի-  
տակահատ ձափարի շիլան (մաննայա կաշա),  
բանջարեղենից պատրաստած պյուրեն, խա-  
շած կարտոֆիլը և գազարը մանր արորած,  
հում մրգերի ու բանջարեղենի հյութերը  
(կաղամբի, գազարի, խնձորի, խաղողի, պո-  
միդորի)։ Որական հարկավոր ե տալ  $\frac{1}{2}$  թեյի  
գդալից սկսած մինչև 6—8 թեյի գդալ։  
Չմեռներն ոգտավետ ե տալ ձկան յուղ (աս-  
տիճանաբար հասցնել 2—3 թեյի գդալի  
որական)։ Այս բոլորի մասին յուրաքանչյուր  
մայր մանրամասն աեղեկություն կստանա  
կոնսուլտացիայում բժշկից կամ մանկաբար-  
ձուհուց։

Այս բոլոր կանոնները կատարում են ար-  
դյոք մայրերը յերեխային կերակրելիս։

Այն որից, յերբ մեզ մոտ գոյություն  
ստացան կոնսուլտացիաները, շատ մայրեր  
սովորեցին այնտեղ յերեխային կերակրելու  
և խնամելու կանոնները։ Բայց դեռ կան  
շատ մայրեր, վորոնք չեն հասկացել այդ-  
պիսի դաստիարակության ոգուաները, հե-

տեաբար հաղվագյաւա չեն այն գեպքերը,  
յերբ մայրը վարվում ե այնպես, ինչպես  
նրան խրատում են իր մայրը կամ հարեվան  
տատմերը, առանց հաշվի առնելու վոչ ծիծ  
տալու ժամանակը և վոչ ել այն, թե ինչ  
տեսակի և վրբքան հավելյալ սնունդ կարելի  
յե տալ յերեխային։

Ճատ անգամ պատահում ե տեսներ, վոր  
յերեխան առաջին իսկ որերից պառկած ե  
ծծակը բերնին կամ, վոր ավելի ևս վատ ե,  
ծամվածքը բերնին։ Հաճախակի առաջին իսկ  
որերից մայրերը յերեխայի բերանն են կո-  
խում հացի չորուկ, յեփած կարտոֆիլ, պրյա-  
նիկ, կանֆետ, և այլն։ Բայց չե վոր այս  
բոլորի հետևանքը լինում է այն, վոր այս-  
պիսի անհամապատասխան մննդից յերեխայի  
մոտ հյուծող փորլուծություն ե առաջա-  
նում։ Դրանից յերեխան այնքան ե ուժա-  
սովու լինում, վոր անկարող ե գառնում  
այլս մաքառել ուրիշ հիվանդությունների  
հետ, վորոնք ուղղակի յուրաքանչյուր քայ-  
լափոխին սպասում են նրան։

Ռախիտի առաջացմանն ու զարգացմանը  
մեծապես նպաստում են յերեխային ան-  
շնորհք կերպով խնամելը, բնակարանը մա-  
րտր չպահելն, ինչպես նաև յերեխային ան-

կարդ կերակրելը։ Այստեղ նույնպիս, վորքան բարձրանում ե կոլխոզնիկների բարեկեցությունը, վորքան աճում ե նրանց կուլտուրական մակարդակն, այնքան հեշտանում ե ընակարանների սանիտարական դրության բարելավումը և կանոնավոր կերպով յերեխաններ խնամելու ունակության արմատացումը կոլխոզունու կենցաղում։

Սակայն առորյա կենցաղում դեռ պահպանվում են խավար նախապաշարմունքներն ու անցյալի մնացորդները։ Շատ անգամ ընտանիքը ատպում ե մի փոքրիկ սենյակի մեջ, թեև նրա խրճիթը յերկու սենյակից ե բաղկացած։ Բացի ընտանիքից, վոր սովորաբար բազկացած ե լինում 5—6 հոգուց, այստեղ են տեղափորվում նաև ընտանի մանր կենդանիները (հավեր, խոճկոր, հորթ)։ Ամբողջ որն ընտանիքն այստեղ ե անցկացնում, նրանք այստեղ են ուտում, խմում, շատ ծխում, այստեղ ել պառկում են քնելու։

Հանկանալի յե, վոր սենյակի ողը թունավորվում ե գոլորշիներով, ծխախոտի ծխով, փոշով, և փոքրիկ յերեխան ստիպված ե չնչել այս ապականված ողը։ Իհարկե, այս ողը թունավորում ե նմանատիս հասուն որ-

գանիզմը, բայց մանկակոն դեռ չամրացած որգանիզմի վրա նրա ունեցած ազդեցությունը միանգամայն կորստաբեր ե։

Հետևաբար հարկավոր ե ոգտագործել տան մեջ յեղած բոլոր սենյակները, յեթե միայն այդ անելու ամենափոքր հնարավորություն կա։ Վորքիկ յերեխայի համար անհրաժեշտ ե հատկացնել ամենալուսավոր, ամենասահմանավոր անկյունը։

Ամառ-ձմեռ հարկավոր ե որական միքանի անգամ մաքրել սենյակի ողը՝ բանալ գուռուպատուհան, միջանցուկ քամի առաջացնել։ Պատուհանները պետք ե ունենան ողանցքներ, վորպեսզի թարմ ողի մշտական հոսանք ունենա սենյակը։

Շատ մայրեր, հետևելով պառավների խորհրդին, վախենում են պաղ առնելուց։ Նրանք ձմեռով դուրս չեն հանում յերեխային թարմ ող ծծելու համար, վախենալով, վոր յերեխան կարող ե պաղ առնել ու հիգանդանալ։ Յեկ յերեխան որերով ստիպված ե լինում պառկել խեղղուկ, ծխոտ սենյակում։ Իսկ յեթե պատահաբար գուրս հանեն յերեխային սենյակից, այնպես են նրան փաթաթում, վոր նա չի կարողանում շունչ առնել։

Յեթե այս տեսակ «զբոսանքից» հետո  
յերեխան հիվանդանա, մայրը՝ առանց  
պատճառը հասկանալու՝ սկսում ե վայ տալ  
իր գլխին՝ «Սիր յես ի՞նչպես եմ խնամել  
նրան, սենյակից դուրս չեմ հանել, բայց  
ելի հիվանդացավ»:

Բոլորովին հասկանալի յե, վոր յերե-  
խան հիվանդանում ե վոչ թե դուրսը պար-  
առնելուց, այլ անշնորք, անկանոն խնամ-  
քից:

Յերեխային խնամելիս անհրաժեշտ ե,  
վոր մաքուր պահիվի ինչպես ինքը յերե-  
խան, այնպես ել այն բոլորը, վորով նա  
շրջապատված ե: Առաջին ամիսները յերե-  
խային անհրաժեշտ ե ամեն որ լիանալ  
և շուտ-շուտ փոխել նրա կեղտոտած  
խանձարուրները, վորովինետե մեզն ու կղկը-  
զանքն ուտում-մաշում են յերեխայի նուրբ  
մաշկը:

Յերեխային հարկավոր չե խանձարուր-  
ներով կապկապել, դրանով խանգարվում ե  
արյան կանոնավոր շրջանառությունը: Բացի  
դրանից, կապկապված յերեխան անկարող ե  
շարժել իր թաթիկներն ու վոտիկները և  
դրանով մկանները զարդացնել:

Պետք ե մոռացության տալ նմանապես  
յերեխային գիշերները մեծերի մոտ և գլո-  
խավորապես մոր կողքին պառկեցնելու վատ  
սովորությունը: Դա յերեխայի համար ֆլա-  
սակար ե, վորովինետե հազալիս՝ հասակա-  
վորի թքի կաթիկները կարող են ընկնել  
յերեխայի գեմքին և շրթունքներին: Եյս  
կաթիկների հետ միասին յերեխայի որգա-  
նիզմը կարող են մտնել նաև զանազան հի-  
վանդությունների, մանավանդ թոքախտի  
(բարակացավ) միկրոբները (վարակը): Լի-  
նում են և այնպիսի գեպքեր, յերբ մայրը՝  
խոր քնի մեջ՝ տակովիս ե անում յերեխային  
ու խեղղում: Հետեւվարար յերեխային հար-  
կավոր ե առանձին պառկեցներ:

Փոքրիկ մահճակալ չինելու գեպքում,  
կարելի յե բարձրակող զամբյուղից որորոց  
սարքել, վորպեսզի յերեխան դուրս չընկնի:  
Յերեխայի որորոցը հարկավոր չե վարա-  
գուրել ու այդպիսով ստիպել նրան, վոր  
նա ծանր ե խեղղուկ ոդ շնչի. ընդհակա-  
ռակը, պեսք և բանալ պատուհանը կատ  
ողանցքը, վորպեսզի յերեխան լիովին աւպա-  
հովված լինի թարմ ոդով:

**ՄԱՀՐՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՐՄ ՈԴԸ, ԱՐԵՎԻ  
ՊԱՅՏԱՌ ԼՈՒՅՍԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ  
ԵՆ ՌԱԽԻԾԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՏԱՐՈՒՄ**

Սուանց մաքուր ողի անկարելի յե առողջ կյանք: Մաքուր ողը, թափանցելով մեր զգեստը և շփելով մաշկի հետ, ամրացնում ե մեր մարմինը, ավելի դիմացկուն ե դարձնում նրան զանագան հիվանդությունների դեմ, Հետեւաբար միք վախենա թարմ ողից, այլ աարգա բոլոր յեղանակներում ել ողատգործեցէք նրան ձեր յերեխայի համար:

Մաքուր ողի հետ միասին մարդու առողջության համար ահագին նշանակություն ունի արեկի պայծառ լույսը: Ամեն կենդանի արարած՝ և բույսերը, և կենդանիները, և մարդը կարոտ են արեվի լույսին: Մենք ամենքս ել վիտենք, վոր մութակյունում, ստվերի մեջ տնկված բույսը, ինչքան ել նրան խնամենք ու ջրենք, աճում ե գունատ, թուլ և վերջիվերջո թառամում ե ու չորանում:

Արեկի լույսն ամենաբարերար ազդեցությունն ունի յերեխայի որգանիզմի վրա: Արեվի ճառագայթների ներգործության շնորհիվ բարելավվում ե մարմին բոլոր որ-

գանների աշխատանքը, բարելավվում ե արյան շրջանառությունը և չնշառություննը: յերեխան դառնում ե կայտառ, ժիր և կենսուրախ: Արեն իր ճառագայթներով սպանում ե միկրոբներին՝ վարակիչ հիվանդությունների պատճառին: Տեսնում եք ուրեմն, թե ինչ մեծ նշանակություն ունի յերեխայի համար մաքուր ողը և արեկ:

Ահա թե ինչու—առաջին իսկ ամիսներից յերեխային անհրաժեշտ ե ընտեղացնել քար ողին ու արեվին: Զպետք ե վախենալ, վոր յերեխան պաղ կառնի: Պաղ առնել կարող ե նա, ով վոր քրտնած, տաք սենյակից պաղ ողի յե գուրս գալիս:

Յերեխային պեսք ե զբոսանեֆի համեն ամեն որ, Տարվա բոլոր յեղանակներին, ձմեռը 2—3 ժամ, առանց յերեսը ծածկելու, վոր աստիճանաբար ընտելանա ցուրտ յեղանակին. իսկ ամառը՝ յերեխային պինդ չփաթթել և գուրս հանել թեթև զգեստով, վորակեսզի արել լուսավորե նրա մարմնի մեծագույն մասը:

Այս բաներն անելով՝ զում կրփած յեվ ամրացրած կլինիք նրա որդանիզմը և կապհպանեք նրան ռախիտից, թոքախտից և ուրիշ շատ հիվանդություններից:

## Ի՞ՆՉ ՊԵՏԾ Ե ԱՆԵԼ, ՅԵՐԲ ՅԵՐԵԽԱՆ ՌԱԽԻՏՈՎ ՀԻՎԱՆԴԱՆԱ

Ամեն հիվանդության ժամանակ, յեթե նա արգեն սկսվել է, նախ և առաջ հարկավոր ե աշխատել հիվանդությունն առաջնող պատճառ ները վոչնչացնել:

Յեթե յերեխան ռախիտով ե հիվանդացել, հարկավոր ե խնամքով ստուգել՝ արդյոք կանոնավոր յեղանակով եք կերակրել նրան, արդյոք ինչպես հարկն ե խնամել եք նրան, դոհացուցիչ են արդյոք ձեր բնակարանային պայմանները, մաքուր եք պահում ձեր բնակարանը, սենյակների ողը մաքրում եք արդյոք և այլն: Յեվ այն բոլոր կանոնները, վարոնց պետք ե հետեւի առողջ, ամրակազմ յերեխա մեծացնելու համար, դուք պետք ե հաշվի առնեք և աշխատեք նրանք կատարելու:

Մաքուր, թարմ ողը և արեի լույսը մեծ նշանակություն ունեն վոչ միայն ռախիտ հիվանդությունը կանխելու, այլև նրան բժշկելու համար:

Յեզ մոտ, Խորհրդային Սիության մեջ, ներկայումս քիչ չեն այնպիսի մանկական սանատորիաներ, ուր յերեխաներին բուժում

են միայն մաքուր ողով և արեով վոչ միայն տարվա տաք յեղանակին, այլև ձմեռը, ցուրտ և անձրեային որերին, յերեխաներին հատուկ պատրաստված տաք ջվաներում կամ վերմակներով գուրս են տանում բաց պատշգամը (վերանդան), ուր և մնում են որվա մեծ մասը: Իսկ ամառը յերեխաներն որերով մերկ պառկած են ֆում բացովյա և որը մի քանի անգամ արեի վաննա յեն ընդունում՝ միայն փոքրիկ զլսարկով գլխիկները ծածկելով: Այսպիսի բժշկությամբ յերեխայի որգանիզմն ամրանում, ավելի դիմացկուն և դառնում:

Յերեխան ռախիտով հիվանդանալիս, մայրը պարտական ե նրան բժշկի ցույց տալ, վորովիետեև այն միջոցառումները, վորոնց մասին խոսեցինք, յերեխայի հիվանդանալու դեպքում այլևս անբավարար են հանդիսանում:

Ռախիտի ժամանակ լավագույն դեղը ձկան յուղն է: Այս գեղը փոքր յերեխաներին տալիս են կես-կես թեյի գդալ, իսկ մեծերին՝ մի-մի թեյի գդալ՝ որը 2—3 անգամ:

Յերկու տարեկանից մեծ յերեխաներին կարելի յետ տալ նաև մի-մի գեսերտի, ճաշի գդալով: Բայց պետք ե հետեւի յերեխայի

ստամոքսին, վորովհետի ձկան յուղը կարող է փորլուծություն առաջացնել: Այս դեպքում ձկան յուղ տալը ժամանակավորապես հարկավոր է դադարեցնել:

Ամառ ժամանակ հիվանդ յերեխային ոգտավետ եւ աղի վաճանաներ անել, բայց նախապես պետք է բժշկի հետ խորհրդակցել: Աղի վաճանաներն այսպիս են անում. վաճայի մեջ ածում են մի գույլ տաք ջուր և ապա ավելացնում են 100—200 դրամ հասարակ աղ: Հիվանդ յերեխան վաճայի մեջ պետք է նստի 5—10 րոպե: Վաճանան անում են ոբընդմեջ, ավելի լավ է յերեկոները, քնելուց առաջ: Վաճանայից հետո յերեխաները սովորաբար քնում են լավ և հանդիսատ: Յեթե յերեխան անքնություն ունենա կամ անհանգիստ քուն լինի, ավելի լավ է վաճանան ցերեկներն անել:

Մենք արդեն ասել ենք, վոր ուսիմիտը բժշկելու ժամանակ բացառիկ ոգուտ եւ բերում արեի լույսը: Բայց արեի ճառագայթներն, անհմուտ ձեռքերով ոզտագործելով, սպուտի փոխարեն կարող են վնաս պատճառել: Ուստի այս տեսակի բժշկության բոլոր ժամանականությունների մասին հարկավոր է բժշկի հետ խորհրդակցել:

Յերեխաները միևնույն տեղում մնալ չեն սիրում: Դրա համար պետք է բերել մի սայլ չոր ալվազ ու թափել արեստ մի տեղում: Յերեխաները հաճույքով ու յերկար խաղում են ավաղի մեջ, բայց նրանց վլուխը հարկավոր է ծածկել թեթև բաց գույնի վլխարկներով:

Յեթե յերեխայի որդանիզմն աստիճանաբար կոփիլի, ապա նա զրանից հետո դառնում է ամուր, դիմացկուն և հեշտությամբ է կովում ամենտեսակ հիվանդությունների հետ:


Զմեռ ժամանակ չափազանց անբավարար է լինում արեի լույսը, մինչդեռ ուսիմիտը բժշկելու համար շատ հարկավոր է այդ լույսը: Գիտնականները հնարքել են հատուկ կվարցի լամպ, վորի արձակած ճառագայթները նման են արեի ճառագայթներին (ուլտրամանիշակագույն ճառագայթներ): Ներկայումս այս լամպով են բժշկում հիվանդ յերեխաներին. առանձնապես հաջող է բժշկվում ուսիմիտ հիվանդությունը:

Բժշկությունը տարվում է այսպես: Հիվանդ յերեխային մերկ պառկեցնում են բազմոցի վրա, լամպի տակ և սստիճանաբար լուսավորում են նրա ամբողջ մարմինը. նախ լուսավորում են կուրծքը, հետո շուռ են տալիս մեկ կողքի, ապա մյուս կողքի և

մեջքի վրա Առաջին նվազ յերեխային շատ  
թիչ են լուսավորում — 1 ըուպե, բայց աստի-  
ճանաբար կես-կես և մի-մի ըուպե ավելաց-  
նում են, Կարճ ժամանակում յերեխան կար-  
գին լավանում ե. փոսկրներն ավելի պնդա-  
նում են, արևայրուկը (զադար) թեթևապես  
ծածկում ե մաշկը, լավանում ե ախորժակն  
ու քունը, յերեխան դառնում ե ավելի ուրախ  
և կայտառ:

Վերջացնելով այս զրքույկը, կարող ենք  
ասել, վոր ուսխիտն այն հիվանդություննե-  
րից ե, վորի կանխումն այնքան ել դժվար  
չե: Հարկավոր ե միայն ուշադրությամբ և  
ծառությամբ կատարել յերեխայի խնամքին  
վերաբերյալ բոլոր հիմնական կանոնները,  
Դրանից զլխավորներն են՝ մաքրությունը,  
շնորքով և կանոնավոր յեղանակով կերակ-  
րումը չոր և լուսառառ բնակարանի հոգատա-  
րությունը, մաքուր ոդով և արեօվ պետքին  
չափ ոգտավելը:

Մայրերն, իրենց բավականաշափ հաստա-  
տակամությամբ և հմտությամբ, կարող են  
ժամանակին կանխել ուսխիտ հիվանդու-  
թյունը և, յեթե յերեխան արդեն հիվանդա-  
ցել ե ուսխիտով, առողջության զգալի բա-  
րելավում ձեռք բ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ինչպես և խորհրդային իշխանությունն հոգ ուանում մանուկների առողջության մասին . . . . .	3
Ինչ բան և սախիտը և ինչով և նա արտահայտվում ինչ գոփոխություններ են սառաջանում սախիտով հիվանդ յերեխայի որգանիզմում . . . . .	8
Ուր և վոր յերեխաններ են հաճախ բանվում սախիտով ինչպես պահպանել յերեխային սախիտից . . . . .	15
Մաքրությունը, թարմ ոդը, արևի ուայծառ լույսը վագույն միջոցներն են սախիտի զեմ մզգող պայ- քարում . . . . .	18
Ինչ պետք ե անել յերբ յերեխան հիվանդանա սա- խիտով . . . . .	27
	36
	38

Ответ. редактор Г. А. Потенц  
Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание № 62|4922. Сдано в набор 23 февраля 1936 г.  
Подписано в печать 16 марта 1936 г. Формат — А6  
105x148. Об'ем 1<sup>7</sup>/<sub>8</sub> п. л. Тираж 1000. Уполномочил  
00-11458. Заказ 921.

Типография им. Стакки1902 года в г. Ростове н-Д.

«Ազգային գրադարան



NL0279565

Цена 35 коп.

3673

5220

На армянском языке

ДОКТОР Л. Б. БЕДЕЛЬЯН

ЧТО ТАКОЕ РАХИТ И  
КАК С НИМ БОРОТЬСЯ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
МРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н-Д Буденновский пр. № 30

Գ. Ր. Ո. Հ Ե Ս Ց  
Արարավ-Դեմ, Մասկովյան, № 58  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)